

## ՊԱՏՄԱԺԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՅՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մշակութային արժեքների հաւաքագրման, պահպանման, ուսումնասիրութեան եւ հանրահռչակման համար ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանում կարեւորուում է թանգարանների գերը: Ժամանակակից թանգարանը մշակոյթի անցեալի եւ ներկայի, նրա հոգեւոր ճգուամներն արտայայտողն է, այն մեծ դեր ունի մարդու կրթութեան, դաստիարակութեան, հոգեկերտման գործում: Պատմամշակութային արժեքների ցուցադրութիւնների հիմքում ընկած է սեփական ժողովրդի հարուստ մշակութային ժառանգութեան ըստ արժանուոյն պահպանումը եւ համակողմանի, գիտական ու արդիական ձեւով ներկայացումը, որի արդիւնքում այն ազգային արժեքից վերածուում է համազգայինի, ձեռք է բերում համաշխարհային ճանաչում:

Թանգարանը ճարտարապետական այն միջավայրն է, որտեղ սկսում է եղիխոսութիւն մշակութային արժեքների եւ մարդու այցելուի միջև: Ցուցանմուշների ճիշտ ներկայացումը նպաստում է ժամանակ եւ տարածութիւն հասկացութիւնների որոշակիորէն այլ ըմբռնմանը, երբ ենթագիտակցօրէն յայտնուում ես ժամանակից եւ տարածութիւնից դուրս՝ տուեալ ցուցադրութեանը համապատասխանող ժամանակաշրջանում եւ տարածքում: Ցուցարահը պէտք է ստեղծի այն մթնոլորտը, ուր մարդը յայտնուում է ներկայացուող ժամանակաշրջանում, որոշակի պատկերացում է ստանուած տուեալ փուլի մշակոյթի, կարեւոր իրադարձութիւնների մասին, կարողանում է իր համար կերտել այն իրական պատկերը, ինչի մասին խօսում է ցուցադրութիւնը:

Մշակութային արժեքը իր համար նոր, անսովոր տարածութեան եւ ժամանակի մէջ չպէտք է կորցնի արժեքը, ընդհակառակը՝ այն պէտք է ցուցադրութեան ժամանակ չնշաւորուի, կարողանայ խօսել եւ պատմել իր եւ իրեն ներկայացնող ժամանակաշրջանի ու տարածաշրջանի մասին: Վերջինս հէնց ինքն առանձին մի պատմութիւն է, խօսուն վկայ որոշակի ժամանակա-

Հատուածի, որոշակի կարեւոր իրադարձութեան կամ անհատի մասին եւ ինքնին դառնում է պատմական որոշակի փուլի կերտող: Յուցասրահում ցուցադրուող նմուշը պէտք է լինի խօսուն, ներկայանալի, գրաւող: Այն պէտք է կարողանայ պահել այցելուին, պատմել իր մասին, մտորելու հնարաւորութիւն տայ:

Թանգարանները հիմնականում լինում են երկու տիպի՝ փակ (ներշենքային) եւ բացօթեայ: Փակ տիպին են պատկանում տարբեր տեսակի եւ նշանակութեան ցուցադրութիւնների համար կառուցուած չէնքերը, որոնցում իրականացւում են մշտական կամ ժամանակաւոր ցուցադրութիւններ: Պատմութեան թանգարանների ցուցասրահներում ներկայացւում են պատմական տարբեր փուլերի եւ տարածաշրջանների կենցաղն ու մշակոյթը ներկայացնող իրեր՝ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Սակայն թանգարանային չէնքի ներսում հնարաւոր չէ անշարժ յուշարձանների՝ հնավայրերի, պաշտամունքային կառուցների (եկեղեցիներ, վանքային համալիրներ), ինչպէս նաեւ ազգագրութեանն առնչուող նիւթական մշակոյթի յուշարձանների (հացատուն, մարագ, հնձան, գիւղական կամ քաղաքային տներ եւ այլն) ներկայացւումը: Մինչդեռ բացօթեայ ցուցադրութեան կազմակերպման դէպում դա հնարաւոր է իրականացնել տեղում:

Հայաստանի Հանրապետութեան ներկայիս տարածքը հարուստ է տարբեր պատմական շերտեր ընդգրկող պատմաճարտարապետական յուշարձաններով՝ հնագոյն, ուրարտական, անտիկ ժամանակաշրջանների բնակավայրեր, դամբարանադաշտեր, միջնադարեան հոյակերտ կոթողներ, ժամանակակից կառուցներ, որոնցից իւրաքանչիւրն առանձին պատմութիւն է, խօսուն վկայանցեալի պատմութեան այն էջերի, որոնց միջով անցել է, եւ որոնք իրենց կնիքն են թողել նրանց պատերի, քարերի, քանդակագրդ բեկորների վրայ:

Դրանցից շատերն ունեն ոչ միայն ազգային, այլ նաեւ համազգային արժէք ու նշանակութիւն, ինչին նպաստում է նաեւ յուշարձանի պահպանումն ու ճիշտ ներկայացւումը: Պատահական չէ, որ Հայաստանն անուանում են թանգարան քաց երկնելի տակ: Կարելի է ասել, որ Հայաստանի տարածքը մշտական ցուցադրութեամբ ցուցասրահ է, որտեղ որպէս ցուցանմուշներ հանդէս են գալիս ճարտարապետական կառուցները՝ ունենալով իրենց մշտական տեղն այդ սրահում: Ինչպէս ցանկացած արժէքաւոր ցուցանմուշ, որ մինչեւ թանգարան մտնելն անցնում է երկար

ճանապարհ (պեղում, մշակում, վերականգնում, ուսումնասիրում, չփագրում), այնպէս էլ յուշարձանը՝ որպէս ցուցադրութեան հիմնական առարկայ, կարիք ունի գիտական ուսումնասիրութեան (պեղում, չփագրում, գծագրերի կազմում), վերականգնման (ամրակայում, մասնակի կամ ամբողջական վերականգնում), պահպանման եւ հանրահռչակման: Իւրաքանչիւր կառոյց պէտք է ներկայացուի արժանավայել ձեւով՝ ընդգծելով նրա ազգային արժէքն ու վերաիմաստաւորումը համազգային համատեքստում: Վերջինիս համար անհրաժեշտ է մի քանի լեզուներով տեղեկատուական վահանակների կազմում, առանձին արժէքաւոր բեկորների ցուցադրութեան կազմակերպում, անհրաժեշտութեան դէպքում յուշարձանը ճարտարապետական (յօրինուածքային, գեղարուեստական, շինարարական) եւ պատմական տեսանկիւնից աւելի մանրամասն պատմող թանգարանային մասի ստեղծում:

Յուշարձանի մասին առաւելագոյն տեղեկութիւնների արդիական ներկայացմամբ հնարաւոր կը լինի աւելի ամբողջական պատկերացում տալ կառոյցի պատմական անցեալի, ճարտարապետական, ծաւալատարածական յօրինուածքի, առանձին մասնիկների եւ նրա հետ կապուած պատմական իրադարձութիւնների մասին: Այսինքն՝ յուշարձանը պէտք է ներկայացնել այնպիսի մանրամասնութեամբ, որ հեռանալիս այցելուի մօտ չմնան հարցականներ, եւ նա կարողանայ ստանալ իր բոլոր հարցերի պատասխանները, լինի լիովին բաւարարուած: Կարծում ենք, որ յուշարձանի՝ լիարժէք լոյսի տակ ներկայացմանը կը նպաստի ինչպէս առանձին տեղեկատուական վահանակների տեղադրումը, այնպէս էլ յուշարձանի տարածքում կամ ներսում առանձին մանրամասների, հնագիտական իրերի, ճարտարապետական մասնիկների փոքրիկ ցուցադրութեան կազմակերպումը:

Տեղեկատուական վահանակների տեղադրման գործընթացը սկսուել է 2008 թուականից Հայկական յուշարձանների ճանաչման ծրագրի ղեկավար ամերիկացի Ռիչարդ Նախաձեռնութեամբ, որի նպատակն էր տեղեկատու վահանակների միջոցով զբոսաշրջիկներին ծանօթացնել Հայաստանի պատմամշակութային կոթողներին: Արդիւնքում տեղադրուեցին 5 լեզուով 382 տեղեկատու վահանակներ Սանահինում, Գոշավանքում, Աղթալայում եւ 150ից աւելի հնագայրերում, որոնք օգնում էին այցելուին յուշարձանի պատմութեանը ծանօթանալ ինքնուրոյն, առանց զբոսաշրջարի:

2013 թուականի Ապրիլին Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութեան եւ «Հայկական յուշարձանների հանաչման ծրագիր» մշակութային հասարակական կազմակերպութեան (ԱՄԱՓ) միջեւ ստորագրուել է «Հայաստանի Հանրապետութեան տարածքում գտնուող պատմամշակութային յուշարձանների վերաբերեալ բազմալիքու տեղեկատուական վահանակներ տեղադրելու մասին» համաձայնագիրը։ Դրանք պատմամշակութային տեղեկոյթ են ներկայացնում 5 լեզուով՝ հայերէն, անգլերէն, ռուսերէն, իտալերէն ու ֆրանսերէն (նկ. 1)։ Մրագրի նախաճեռնողը Ռիչարդ Նայն է։ Գիւմրում իտալիայի պատույ հիւպատոս Անտոնիո Մոնտալտոյի հովանաւորութեանն ու ՀՀ մշակոյթի նախարարութեան օժանդակութեանը գուգահեռ «Վիվասելը» դարձաւ ծրագրի համագործակցող հովանաւորը։ Մրագրին օժանդակում է նաեւ ԻԿՕՄԾ/Հայաստան հասարակական կազմակերպութիւնը։



Նկար 1. Տեղեկատուական վահանակներ Հաղպատում

Պատմամշակութային ժառանգութեան պահպանման եւ հանրահռչակման գործում տեղեկատուական վահանակներից բացի, կարծում ենք, որ կարեւոր դեր ունեն նաև յուշարձններին կից թանգարանային շէնքերը:

Կը փորձենք դիտարկել Հայաստանի Հանրապետութեան տարածքում գտնուող տարբեր պատմական փուլերի յուշարձաններ, ինչպէս նաև այդ յուշարձանների համար որպէս խօսունցուցատակ հանդէս եկող թանգարանային շէնքերը։ Վերջիններս ստեղծուած են ոչ միայն յուշարձանն աւելի մանրամասն յուսաբանող ցուցադրութեան (առանձին արժէքաւոր բեկորներ, ճարտարապետական մանրամասներ, հնագիտական իրեր, յուսանկարներ, գծագրեր, ֆիլմեր) կազմակերպման համար, այլ նաև ունեն դիտամշակութային նշանակութիւն։

## ԷՐԵԲՈՒՆԻ ԱՐԳԵԼՈՅ-ԹԱՆԳԱՐԱՆ

Էրեբունի քաղաք-ամրոցը, սեպագիր արձանագրութեան համաձայն, հիմնադրել է ուրարտական տէրութեան հօգորագոյն արքաներից մէկը՝ Արգիշտի Ա., Ք.ա. 782 թուականին (Ակ. 3): Այն հանդիսացել է Արարատեան դաշտի կարեւորագոյն վարչական, տնտեսական կենտրոն, ինչպէս նաեւ ռազմական կարեւոր յենակէտ: Կազմուած է եղել միջնաբերդից եւ բուն քաղաքից: Ուրարտական պէտութեան անկումից յետոյ էլ (Ք.ա. Զ. դար) էրեբունին շարունակել է գոյատեւել աքեմենեան, վաղ հայկական եւ հելլէնիստական ժամանակներում, ինչի մասին վկայում են ամրոցի ճարտարապետական կառույցներն ու պեղուած հնագիտական առարկաները (երկու միլետեան դրամ, Օգոստոս կայսեր դրամը, արծաթեայ երեք եղջերագաւաթ եւ մէկ սափոր):


Էրեբունի ամրոցի տարածքում պեղման եւ ուսումնասիրման աշխատանքներ կատարուել են 1950-1968 (Կ. Ցովհաննիսեանի ղեկավարութեամբ), այնուհետեւ ընդմիջումներով մինչեւ 2004 եւ 2006ից առ այսօր:

Ամրոցի միջնաբերդում 2008ից իրականացուող հայ-Փրանսիական գիտատեխնիկական համագործակցութեան շրջանակում Յուլիսի 2-ից մեկնարկուել է 2013 պեղումների գործաշրջանը. Նախաձեռնութիւնն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանինն է (Ակ. 6): Պեղումների արդիւնքում բացուել են պաշտամունքային, պալատական եւ տնտեսական կառույցներ: Կատարուել են ամրակայման, պահպանման, տարածքի բարեկարգման աշխատանքներ, ինչը հնարաւորութիւն է տալիս այցելուին շրջել միջնաբերդում, ծանօթանալ յուշարձաններին:

Արին Բերդ բլրի վրայ՝ ուրարտական էրեբունի ամրոցի հարեւանութեամբ, 1968 թուականին հիմնուել է էրեբունի թանգարանը (Ակ. 2), որի բացումը համընկել է Երեւան քաղաքի 2750ամեակի տօնակատարութիւնների հետ: Թանգարանի շէնքի (Ճարտ.՝ Շ. Ազատեան, Բ. Արգումանեան, քանդակագործ՝ Ա. Ցարութիւնեան) ծաւալատարածական յօրինուածքի հիմքում ընկած են ուրարտական պալատական կառույցների, ինչպէս նաեւ ժողովրդական բնակելի տան յօրինուածքները:


Արգելոց-թանգարանի գործունէութեան նպատակը մշակութային արժէք ներկայացնող նշեալ անշարժ յուշարձանների ուսումնասիրման, պահպանման, հանրահռչակման, օդտագործման, ինչպէս նաեւ յուշարձանախմբերի, յուշարձանների համալիրների

պատմական միջավայրի եւ դրան յարող տեղանքապատկերների (լանդշաֆտի) ամբողջական պահպանութեան ապահովումն է, այդ եւ այլ յուշարձաններից յայտնաբերուած թանգարանային առարկաների եւ հաւաքածուների հաշուառումը, թանգարանային հաւաքածուի անխաթար եւ ամբողջական պահպանութեան ապահովումը:



Նկար 2. Երևունի թանգարանի շենքը

Թանգարանի երկարկ շէնքի առաջին յարկի նախասրահում գտնւում են տոմսերի, գրքերի, գրքոյկների, յուշանուէրների վաճառքի փոքրիկ սրահը (ուր վաճառում են նաեւ ցուցանմուշների կրկնօրինակները), վարչական սենեակները, գիտաշխատողների սենեակները, ինչպէս նաեւ ժամանակաւոր ցուցադրութիւնների սրահը: Երկրորդ յարկում ներքին բաց բակի շուրջ տեղակասրահը յարկու հիմնական ցուցադրութիւններով ցուցասրահներած են երկու հիմնական ամրոցի տարածքից յայտնաբերուած ըր, որտեղ ցուցադրուում են ամրոցի տարածքից յայտնաբերուած քարէ արձանագրութիւններ, հնագիտական իրեր, գինու հակայական կարասներ, զէնքեր, աշխատանքային գործիքներ, հացահատիկային կուլտուրաներ:




Նկար 3. Քարե սեպագիր արձանագրութիւններ

Թանգարանային հաւաքածուի բացառիկ արժէքները բազմիցս ցուցադրուել են Լուվրում (Ֆրանսիա), Մետրոպոլիտէն թանգարանում (ԱՄՆ), Էրմիտաժում (Ռուսաստան), Բրիտանական թանգարանում (Մեծ Բրիտանիա) եւ Հանրայայտ այլ մշակութային օջախներում:



Նկար 4. Ամրոցի պարիսպները



Նկար 5. Խալդի աստծոյ տաճարը

Թանգարանի շէնքի ձախ կողմի աստիճանները տանում են դէպի բարձր բլուրը, որի վրայ են գտնվում էրեքունի ամրոցի ամրակայուած եւ մասնակի վերականգնուած յուշարձանները (նկ. 4, 5): Այցելուների համար նախատեսուած են բարեկարգ ճանապարհներ, արահետներ, լուսաւորութեան համակարգ եւ բազմա-

լեզու տեղեկատուական վահանակներ: Տարածքում շարունակում են պեղման աշխատանքները (Ակ. 6):

2003 թուականի ՀՀ Կառավարութեան որոշմամբ վերանուանուելով՝ որպէս պատմահնագիտական արգելոց-թանգարան, այն այսօր գործում է Կարմիր բլուր եւ Շենգավիք մասնաճիւղերով։ Այն հանդիսանում է հանրութեան համար այցելելի միակ հնագիտական արգելոց-թանգարանը Երեւան քաղաքում եւ կարեւոր ուրարտագիտական կենտրոն տարածաշրջանում։



#### Նվազ 6. Պեղումներ ամրոցի տարածքում

Կարմիր թլուր եւ Շէնգաւիք հնավւայրերում շարունակում  
են հնագիտական պեղումներն ու ամրակայման աշխատանքները:  
Շէնգաւիթում իրականացուած է նաև ներշենքային փոքրիկ  
ցուցադրութիւն, ուր ներկայացուած են տարածքից պեղուած  
տարաբնոյթ նիւթեր:

## ՄԵԾԱԿՐՈՅԱ ԱՐԴԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ

**ՄԵԾԱՄՈՐ** հնագոյն ամրոց-բնակատեղին համաշխարհային  
մշակոյթի խրայտառուկ յուշարձաններից է։ Այն գտնվում է Երե-  
ւանից 35 կմ հարաւ-արեւմուտք՝ Տարոնիկ դիւլից ոչ հեռու,  
**ՄԵԾԱՄՈՐ** գետի ափին:

1965ից մինչեւ այժմ Մեծամուռում պարբերաբար պեղումներ են կատարվում: Պեղուած մշակութային շերտերը վերաբերում են բրոնզի եւ երկաթի դարաշրջաններին: Պեղուած նիւթերում բրոնզի եւ երկաթի դարաշրջաններին:

ըլ վկայում են, որ բրոնզի դարաշրջանում (Ք.ա. Դ.-Բ. հազ.) Մեծամօրը մշակոյթի ծաղկուն կենտրոն էր: Լաւ պահպանուել է պղնձաձուլարանի ամբողջ համակարգը՝ հալոցը եւ հնոցները, որոնք կառուցուել են ժայռերի մէջ: Գիտնականները պարզել են, որ Մեծամօրը խոչոր բնակատեղի էր, որ զբաղեցնում էր 10,5 հա տարածք, ունէր կիկլոպեան պարսպով շրջապատուած միջնաբերդ, զիկուրատ-աստղադիտարան:

«Մեծամօր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացուել է 1968ին (Ցկ. 7): Ներկայումս այն գործում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի կազմում: Այստեղ հաւաքուել եւ ցուցադրուել են յուշարձանից պեղուած 27000ից աւելի առարկաներ: Առաջին յարկում ցուցադրում են ամրոցում եւ դամբարանադաշտում յայտնաբերուած նիւթերը, որոնք վերաբերում են վաղ բրոնզից մինչեւ ուշ միջնադարին: Երկրորդ յարկում ներկայացուած են հնագոյն Մեծամօրի արհեստներն ու ծէսերը (Ցկ. 8): Նկուղային յարկում գտնուում է յատուկ զետեղարանը, ուր ներկայացուած են վանի թագաւորութեան շրջանի ոսկի, արծաթի, սալթի, կիսաթանկարժէք քարերից, մածուկից պատրաստուած եզակի մշակութային արժէքներ:



Նկար 7. Թանգարանի շենքը



Նկար 8. Թանգարանի ցուցասրահ

## ԶՈՒՄՐԹՆՈՑ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ

Զուարթնոց արգելավայրը ստեղծուել է էջմիածնի միաբան հևաչիկ վարդապետ Դադեանի նախաճեռնութեամբ 1900-1907ին՝ հաշուի առնելով 1904ին Ճարտարապետ Թորոս Թորամանեանի ղեկավարութեամբ պեղումներով բացուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարի (կառուցուած 641-652) եւ յարակից շինութիւններից:

ըի աւերակների պատմաճարտարապետական բացառիկ նշանակութիւնն ու պատմահնագիտական գտածոների արժէքը։ Իրաւամբ տաճարը խօսուն վկայ է ժամանակի վարպետների ճարտարապետական եւ շինարարական մտքի թուիչքի։



Նկար 9. Մասնակի վերականգնուած Զուարքնոցի տաճարը ցերեկը եւ գիշերային լուսաւորութեան ժամանակ

1924-1944 արգելավայրը գործել է որպէս Զուարքնոցի հնագիտական վայր, 1944-1986 «Զուարքնոց» յուշարձան թանգարան, 1986-1989 «Զուարքնոց» պատմաճարտարապետական թանգարան, 1990-2003՝ «Զուարքնոց» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան։ Այն 2003 Յունիսից գործում է ՀՀ մշակոյթի նախարարութեան «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի կազմում՝ «Զուարքնոց» պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճիւղ անուանումով։ Արգելոց-թանգարանն ունի երկու՝ «Պահպանման եւ շահագործման» ու «Հանրահնչակման, գիտահետազոտական եւ ֆոնդային աշխատանքների» բաժիններ։ Թանգարանային շէնքում անձնակազմի համար նախատեսուած են թշնամութեական համար անցկացնելու համար և այլ արժեքների սպառակման համար անցկացւում են շրջայցեր հայերէն, ոռուսերէն եւ անգլերէն լեզուներով։

«Զուարքնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանն իրականացնում է Զուարքնոց պատմաճարտարապետական յուշարձանի, յուշարձանի տարածքից յայտնաբերուած եւ այդ յուշարձանին վերաբերող մշակութային այլ արժեքների պահպան-շարժանին վերաբերող մշակութային այլ արժեքների պահպան, ուսումնասիրման, հանրահոչակման, օգտագործման եւ պահպանման գործառողթներ։

1957ին ՀԽՍՀ կառավարութեան որոշմամբ յուշարձանի տարածքում վերականգնուել է է. դարի բնապատմական միջավայրը, կատարուել է տարածքի կանաչապատում, ստեղծուել բնապատմական միջավայր եւ այգեպուրակային համալիր: Տաճարային համալիրում ստեղծուած են համապատասխան պայմաններ հաշմանդամների եւ կոյրերի սպասարկման համար: VivaCell MTSի աջակցութեամբ տաճարի տարածքում տեղադրուել են տեղեկատուական վահանակներ (հինգ լեզուներով) եւ կոյրերի համար նախատեսուած Բրայլեան համակարգով կազմուած վահանակ: 2012ի գարնանից յուշարձանում գործում է գիշերային սպասարկում, յուշարձանը այցելուներին է ներկայանում նաև գեղարուեստական լուսաւորութեան եւ ճայնային էֆեկտների գեղեցիկ համադրութեամբ (նկ. 9):

Զուարթնոց տաճարի հարաւային կողմում 1936-1937 ճարտարապետ Նիկողայոս Բունիաթեանի նախագծով եւ հնագէտ Կարօ Ղաֆաղարեանի ղեկավարութեամբ կառուցուել է Զուարթնոցի թանգարանային շէնքը, որի բացումը կատարուել է 1937 Նոյեմբերի 7ին: Սկզբում այն ունեցել է փոքր ցուցադրութիւն՝ ձեւաւորուած մէկ սրահի մէջ՝ 80քմ մակերեսով: 1988 ճարտարապետ Լ. Սադոյեանի նախագծով սկսուել են թանգարանային շէնքի ընդարձակման աշխատանքները, եւ այն գրեթէ քառապատկուել է, իսկ 2003ին աւարտուել են թանգարանային շէնքի յարդարման աշխատանքները: Այժմ ցուցադրութեան համար թանգարանն ունի 3 սրահ՝ երկուսը մշտական, իսկ մէկը՝ ժամանակաւոր եւ շրջիկ ցուցադրութիւնների կազմակերպման համար: Թանգարանի հիմնական եւ գիտաօժանդակ պահուածներում, ինչպէս նաև բաց ցուցադրութիւնում կան 10 հազարից աւելի միաւոր նիւթեր, որոնցից առաւել ամբողջականները տեղ են գտել մշտական ցուցադրութեան մէջ:

Թանգարանում 1937ին կազմակերպուած առաջին մշտական ցուցադրութեան հեղինակը եղել է հնագէտ Կարօ Ղաֆաղարեանը, իսկ 1981 Մայիսին կազմակերպուած երկրորդ մշտական ցուցադրութեան հեղինակը՝ Վարդան Յարութիւնեանը:

Այժմ իրականացուած է երրորդ մշտական՝ արդի թանգարանագիտական չափանիշներին համապատասխանող գիտական ցուցադրութիւնը (կազմակերպիչներ՝ Հ. Սամուէլեան, ի. Ռեւազեան): Թանգարանի նախասրահում գտնւում է տոմսերի, գրքերի եւ գրքոյների վաճառքի տաղաւարը, տեղադրուած է համակարգիչ, որի միջոցով այցելուները հնարաւորութիւն ունեն լրա-

ցուցիչ եւ համակարգուած տեղեկութիւններ ստանալ Զուարթնոցի եւ Հայաստանի միւս պատմամշակութային արգելոց-թանգարանների մասին։ Նախարահում են տեղադրուած նաեւ կոյրերի համար նախատեսուած թրայլեան այբուբենով գրուած բացատրագիրը, որ տեղեկութիւն է հաղորդում տաճարի պատմութեան վերաբերեալ։

Ցուցադրութիւնը բացւում է նախարահի հանդիպակաց պատին օրգանական ապակու վրայ գրուած Խրիմեան Հայրիկի խոսքերով՝ ուղղուած Ներսէս Գ. շինող կաթողիկոսին, որի նախաձեռնութեամբ կառուցուեց Զուարթնոց (Ս. Գրիգոր Եկեղեցի) տաճարը։

«Խրիմեան Հայրիկից յիշատակ յաւերժական ներսիսի Շինող Հայրապետին, որ ընդ հողով ծածկեալ էր ել ի լոյս, անդուլ աշխատութեամբ տ. Խաչիկ վրդ. տեսնիլ այս չնաշխարիկ գիւտ սրբանուեր վիճակեցաւ Հայոց Հայրիկին»

Դեկտ. 4 1901 ամի»։


Ցուցադրութեան առաջին սրահում տեղ են գտել պեղումների ժամանակ Զուարթնոցի տարածքից յայնաբերուած միջնադարեան կաւէ 2 կարասները (իւրաքանչիւրը 500լ տարողութեամբ), հայատառ գրութեամբ արեւային բոլորակ ժամացոյցը, Ներսէս Գ. կաթողիկոսի թողած «Ներսէս Է. կառուցել, յիշեցէ՞» յունատառ արձանագրութիւնը, «Յօհան» մակագլութեամբ շինարար վարպետի բարձրաքանդակը, ինչպէս նաեւ տաճարից մնացար զարդարանդակ բեկորներ։ Ցուցադրուում են նաեւ յուցած այլ զարդարանդակ բեկորներ։ Ցուցադրուում էն նաեւ յուշարձանի տարածքից պեղուած իրեր՝ բազմերանգ խեցեղէնի եւ զարդերի նմուշներ, մետաղեայ գործիքներ, գամեր եւ խոփեր (Ակ. 10):

Սրահը յագեցած է նաեւ բացատրական տեքստերով՝ հայ պատմիչների վկայութիւններ տաճարի կառուցման վերաբերեալ, զուարթնոցատիպ կառուցման վերլուծութիւններ եւ այլն։

Երկրորդ սրահում թանգարանի այցելուներին ներկայացւում է տաճարի առաջին պեղումների ընթացքը, պեղումներից յայտնաբերուած պատմահնագիտական արժէքները, ինչպէս նաեւ հնավայրի պեղումների մասին տեղեկութիւններ, փաստավակեցնական լուսանկարներ, փաստաթղթեր, նամակներ, չափագրական լուսանկարներ, գամեր եւ այլն։ Սրահի կենտրոնում ցուցադրուում է գրութիւններ եւ այլն։ Սրահի մասնակերտը՝ ըստ Թորամանեանի վերակազմութեան նախագծի (Ակ. 11): ...



Նկար 10. Թանգարանի առաջին ցուցասրահը



Նկար 11. Զուարքնոցի մանրակերտը (Արկրորդ սրահ)

**Բացօթեայ ցուցադրութիւնում ցուցադրութիւնում են Զուարքնոց տաճարի աւերակների ամրակայած եւ մասնակի վերականգնած պատերի մնացորդներ, սիւների խարիսխներ, բներ, զամբիւղախոյակ եւ արծուախոյակ սիւնաշարեր, կամարներ, բարաւորների քիւեր, թաղակապ ծածկերի կրաշաղախէ խոշոր զանգուածներ, մկրտութեան աւազան, ջրհոր, տաճարից պահպանուած զարդաքանդակներ, տաճարի հարաւարեւմտեան մասում գտնուող կաթողիկոսական պալատը, վանականների խցերը, բաղնիքը, Դ. Պարի բազիլիկ եկեղեցու մնացորդները եւ գինու հնձանը, պեղումների ընթացքում համալիրի տարածքից յայտնաբերուած Ք. Ա. Հազարամեակներով թուագրուող կլոր սալաքարը (չորս տարբեր փոսիկներով եւ առուակով), նախաքրիստոնէական շրջանի պաշտամունքային ֆալոտիպ կոթողը, ինչպէս նաեւ ուրարտական Ծուսայ Բ. արքայի (Ք. ա. 685-645) սեպագիր արձանագրութիւնը:**

Ակսած 1937ից արգելոց-թանգարանում կազմակերպուած բաց եւ փակ ցուցադրութիւնների հիմնական նպատակը ոչ միայն Զուարքնոցի պատմութեան եւ ճարտարապետութեան ներկայացումն է եղել, այլեւ պատկերացում տալը հայկական ճարտարապետութեան ակունքների, նրա աւանդոյթների եւ, ընդհանրապէս, հայ ճարտարապետութեան վրայ Զուարքնոց տաճարի թողած ազգեցութեան եւ հայ մշակոյթի պատմութեան մէջ նրա խաղացած դերի մասին: 2000 թուականից ՈՒՆԵՍԿՕի Համաշխարհային ժառանգութեան կենտրոնի որոշմամբ Զուարքնոցն էջմիածնի Մայր տաճարի եւ Վաղարշապատի միւս եկեղե-

ցիների հետ գրանցուել է ՈՒՆԵՍԿՕի Համաշխարհային ժառանգութեան ցանկում:

Ինչպէս Զուարթնոցում, այնպէս էլ դիտարկուած միւս պատամամշակութային արգելոց թանգարաններում (իրեբունի, Շէնգաւալիթ) աշխատակազմի եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութեան անձնակազմի հետ համատեղ կազմակերպում են բազմաթիւ միջոցառումներ՝ տօնակատարութիւններ, համերգներ, հանդիպումներ, որոնք իրականացւում են կրթական, ճանաչողական ու հանրահռչակման ուղղութիւններով:

Թանգարանային միջավայրում համերգները, հանդիպումներն ու տօներն ուղղուած են հանրութեան համեմատաբար նոր թանգարանային պահանջմունքների բաւարարմանը եւ ժամանցային բնոյթ են կրում:

## ԵԿԵՂԵՑԻ-ԹԱՆԴԱՐԱՆ

Հայաստանում թանգարանների ձեւաւորման գործում մեծ ներդրում են ունեցել նաեւ հոգեւորականները: Տաճարային հաւաքածոներն ու գանձատները դիտնականները համարում են թանգարանների նախատիպեր: Նշենք, որ գեռեւս վաղ միջնադարում հայկական եկեղեցիների աւանդատներում պահում էին թանկարժէք գտեստներ, մարդարտակուու թագեր ու թասակներ, ոսկէ եւ արծաթէ սկիհներ, արծաթակազմ մագաղաթեայ ձեռագրեր եւ այլ արժէքաւոր բարձրարուեստ իրեր: Խոշոր վանքային համալիրները (Սանահին, Հաղպատ, Հաւուց Թառ, Գոշավանք) այդ նպատակի համար ունեին առանձին կառուցուած գանձատներ:

Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանը կառուցուել է 1869ին Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնութեամբ: Այն գտնում է Տաճարի արեւելեան մասի ողջ լայնութեամբ: Մինչ թանգարանի կառուցումն աւանդական սրբազն մասունքները պահուել են Աւագ Խորանին կից արեւելեան պահոցներում: Թանգարանի կառուցման շնորհիւ տեղադրուեցին պահանջմունքներում: Թանգարանի կառուցման շնորհիւ տեղադրուեցին պահանջմաններ եւ ցուցափեղկեր, որոնք աւելի յարմարաւէտ էին ցուցադրութեան համար:

Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում պահուող արժէքաւոր գանձերի ցուցադրութիւնը կազմակերպում է երկու ցուցադրութեան գանձերի ցուցադրութիւնը կազմակերպում է երկու ցուցադրութեան գանձերի ցուցադրութիւնը, որոնց կենտրոններում տեղադրուած ապակեպատ

սեղաններում ներկայացրում են արծաթակազմ մագաղաթեայ մատեանները, իսկ պատերի ողջ պարագծով տեղակայուած փայտեայ պահարաններում՝ սրբազն գանձերը (Յկ. 12): Ցուցադրուող սրբազն գանձերից են Գեղարդը, Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը, Նոյեան Տապանի մասունքը, Խոտակերաց Սուրբ Նշան մասանց պահարանը՝ Ցիսուս Քրիստոսի Ս. Խաչափայտի մասունքներով, ձեռագիր մատեաններ եւ այլ արժէքաւոր նմուշներ:



Նկար 12. Էջմիածնի Մայր Տաճարի բանգարանի ցուցասրահները

Թանգարանային ցուցադրութիւնն աւելի հետաքրքրական էն դարձնում Տաճարի Աւագ՝ խորանի տակ գտնուող 301-303 թուականների Գրիգոր Լուսաւորչի կողմից հիմնած Խորանի մասցրդները, ինչպէս նաև Ալ. Սահինեանի կողմից պեղումների ժամանակ յայտնաբերուած հեթանոսական կրակարանը (որի վրայ կառուցուել էր խորանը) դիտելու հնարաւորութիւնը: Այդ ցուցադրութիւնը հնարաւորութիւն է տալիս այցելուներին տեսնել տաճարի բազմաշերտ կառուցուածքը, պատկերացնել այն փոփոխութիւնները, որոնք կրել է տաճարը պատմական տարբեր փուլերի զարգացման ճանապահին:

### ՏԱՅԹԵՒԻ ԶԻԹՀԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՈՒՄԸ

Միջնադարի կրօնական համալիրներում հանդիպում ենք ձիթհանների, հնձանների, ջրաղացների, որոնք հայ ճարտարապետութեան արտադրական կառուցուածքների հետաքրքրական օրինակներից են:

Հայաստանում միջնադարից մեծ քանակով ձիթհաններ են հասել: Ձիթհաններ են ունեցել աշխարհիկ եւ վանական խոշոր տնտեսութիւնները (Անի, Հաղպատ): ԺԼ. դարում երեք ձիթհան է ունեցել էջմիածնի վանքը:

Միջնադարեան բազմասենեակ ձիթհանի օրինակ է Տաթեւի վանքի բաւականին լաւ պահպանուած կառուցուածքը (ԺՀ-դար), որ գտնուում է վանքի պարիսպներից մօտ 20մ հեռաւորութեան վրայ, դէպի հիւսիս-արեւելք: Այն բաղկացած է չորս սենեակից, ունի կոմպակտ յատակագիծ եւ կառուցուած է բազալտի կոպիտ մշակուած քարերից: Հիմնական՝ արտադրական սենեակը երկու զոյտ որմնամոյթերի եւ ծածկի սիստեմի միջոցով բաժանուում է երեք մասի:



Նկար 13. Տարեւի ճիբ-հանի ցուցադրութիւնները

2010ին ձիթհանն ամբողջութեամբ վերականգնուել է, կատարուել է ներքին ձեւաւորում՝ ներկայացնելով արտադրական կառոյցում կտաւատի ձէթի արտադրման տեխնոլոգիական ողջործընթացը՝ պահպանուած պատմական սարքերի վերաօգտագործմամբ, ցուցադրական, տեղեկատուական նիւթերով, ժամանակակից լուսաւորութեան եւ ձեւաւորման տարրերով (Ցի. 13):

ԱՐՑՈՒՆԻԿ ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ԹԱՆԴԱՐԱՆԸ

2006ին սկսուել են Արցախի Տիգրանակերտի պեղումները և ընթանում են առ այօր: Արդիւնքում գտնուել եւ ուսումնա- սիրուել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, քաղաքի կենտ- րոնական մասը եւ վաղ միջնադարեան բազիլիկ եկեղեցի: 2008ի ըստ ական մասը եւ վաղ միջնադարեան բազիլիկ եկեղեցի: 2008ի պեղումների ժամանակ յայտնաբերուած ամենակարեւոր գտածո- ներից է հայերէն արձանագրութիւնը:

**2010 Մայիսին Տիգրանակերտի տարածքում գտնուող ԺՀ-դարի կանգուն ամրոցում բացուել է պեղումների թանգարանը, որն այցելուներին ներկայացնում է հնգամեայ աշխատանքների ընթացքում յայտնաբերուած ցուցանմուշները (Ակ. 14):**



Նկար 14. Տիգրանակերտի տարածքում գտնվող ժՀ-դարի ամրոցը



Նկար 15. Թանգարանի ցուցասրանը

**Տիգրանակերտի թանգարանը կազմուած է նախարահից եւ երկու ցուցասրահներից: Նախարահում պայմաններ են ստեղծուած Տիգրանակերտին վերաբերող շարժապատկերների ցուցադրութիւն համար, կատարուում է նաեւ յուշանուէրների վաճառք, իսկ որմնախորչերում կազմակերպուած է խեցանօթների ցուցադրութիւն: Առաջին սրահն ունի ներածական բնոյթ: Այստեղ ներկայացնուած է Տիգրանակերտ քաղաքի յայտնագործման պատմութիւնը, ինչպէս նաեւ կան տեղեկութիւններ պեղումների ընթացքի վերաբերեալ: Պատերի խորչերում ցուցադրուում են անտիկ եւ միջնադարեան ամբողջական անօթներ, ապակեծածկ սեղանի վրայ՝ հնագիտական նիւթեր, պեղումներին վերաբերող հրատարակութիւններ:**

Երկրորդ սրահում ցուցատախտակներ են՝ Տիգրանակերտի պեղումների ընթացքը ներկայացնող տեքստային, գծագրական եւ լուսանկարային տեղեկութիւններով (Ակ. 15): Այդ սրահում ցուցադրուում են նաեւ խեցեղին, ապակէ, քարէ եւ ոսկրէ առարկաներ, ճարտարապետական բեկորներ՝ խարիսխ, սիւն, քանդակագրութիւններ, քիւի բեկորներ:

**Թանգարանի շնորհիւ աւելացել են այն այցելուների թիւը, ովքեր չկարողանալով բարձրանալ միջնադարութիւնը, յուշարձանի, պատմամշակութային այդ կարեւոր շերտի հետ հաղորդակցուում են՝ դիտելով ցուցադրութիւնը:**

Պատամամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութեան անձնակազմի հետ համատեղ կազմակերպում են բազմաթիւ միջոցառումներ՝ տօնակատարութիւններ, համերգներ, հանդիպումներ, որոնք իրականացնում են կրթական, ճանաչողական, հանրահռչակման ուղղութիւններով:

Այսպէս, Հայաստանի Հանրապետութեան տարածքում գըտնուող անշարժ յուշարձանների պահպանման, լիարժէք եւ համակողմանի ցուցադրութեան, ինչպէս նաև հանրահռչակման համար կարեւորում են հետեւեալ միջոցառումները.

### 1. Բարեկարգման խնդիրների լուծում.

- ճանապարհներ դէպի յուշարձան, արահետներ՝ հաշուի առնելով նաև հաշմանդամների անարգել շարժումը,
- հասարակական սպասարկման սրահներ,
- փոխադրամիջոցների համար կայանատեղի,
- յուշանուէրների, գրքի եւ գրքոյների վաճառասրահներ
- մի քանի լեզուներով ժամանակակից տեղեկատուական վահանակների տեղադրում,
- գիշերային լուսաւորութեան եւ ձայնային ժամանակակից համակարգի տեղադրում,

### 2. Առանձին արժեքաւոր նարտարապետական բնկորների եւ հնագիտական իրերի ցուցադրութեան կազմակերպում.

- բաց տարածքում,
- յուշարձանի ներսում,
- առանձին թանգարանային կառոյցում՝ յագեցած արդիական տեղեկատուական տեխնոլոգիաներով,

### 3. Յուշարձանի տարածքում կամ թանգարանի շենքում մի շարք միջոցառումների կազմակերպում, որոնք հնարաւորութիւն կը տան հասարակութեան լայն խաւերին, յատկապէս երիտասարդ սկզբնին հաղորդակից դառնալ Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի անշարժ յուշարձաններին, ինչպէս նաև տուեալ վայրի հետ կապուած յիշողութիւններին.

- դասախոսութիւններ,
- շարժապատկերների դիտումներ,

- Կրթական ծրագրեր,
- ազգային, մշակութային տօներ, թատերականացուած ներկայացումներ, երդչախմբային, պարային համերգներ,
- ազգային կերակրատեսակների համտեսումներ:

**ՆԱՐԻՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆ  
ԱՇՈՏ ՍԱՖԱՐԵԱՆ**

**Summary****“MUSEUMIFICATION” OF HISTORICAL AND  
ARCHITECTURAL MONUMENTS IN ARMENIA**

NARINE MKHITARYAN  
ASHOT SAFARYAN

The issue of “museumification” and preservation of historical-architectural monuments of different historical layers located on Armenia’s present-day territory is analyzed in this article. Exhibits in the open air and in the buildings of the museum reserves Erebuni, Shengavit, Karmir Blur, Metsamor, Zvartnots, as well as the museum of Etchmiadzin Cathedral, the oil mill of Tatev monastery, and the museum of Tigranakert in Artsakh have been considered. The activities that promote the conservation, comprehensive performance, and popularization of architectural monuments are presented at the end.

